**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/6-1**

ք. Գավառ «13»03._2023 թ.

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Գ. Մողոմոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Նատալի ֆարմ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

Сканировано с CamScanner

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

Сканировано с CamScanner

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 7043470 /յոթ միլիոն քառասուներեք հազար չորս հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[19.1]:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Сканировано с CamScanner

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

---

*[21] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:[22] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

*[22] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Сканировано с CamScanner

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Сканировано с CamScanner

8.13 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիրը կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**
<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21
«Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Գեղարքունիք մ/6
հ/հ 220085148329000
ՀՎՀՀ 08417304
Տնօրեն՝ Գ. Մոզոյան

_______________
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
<<Նատալի ֆարմ>>
ք. Երևան,Օգանովի 15/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
էլ. հասցեն՝ nataliphaгm@bk.ru
Հեռ. (010)744212
գլխավոր տնօրեն՝ Ա. Սաաթյան

_______________
/ստորագրություն/
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում, պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Сканировано с CamScanner

Հավելված N ,
« 13 » 03. 2023 թ. կնքված
«ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/6-1»* ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 3 | 33611360/501 | Ակվադետրիմ D-3 ջրային լուծույթ 10 մլ | Ակվադետրիմ D-3 ջրային լուծույթ 10 մլ , Մեդանա ֆարմա | խոլեկալցիֆերոլ , լուծույթ ներքին ընդունման, 375մկգ/մլ (15000ՄՄ/մլ), 10մլ ապակե սրվակ-կաթոցիկ | հատ | 750 | 375 000 | 500 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել |
| 6 | 33671125/502 | ամբրօքսոլ դ/հ 30մգ | ամբրօքսոլ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | ամբրօքսոլ (ամբրօքսոլի հիդրոքլորիդ) դեղահատեր 30մգ. բլիստերում (20/2x10/) | հատ | 14,0 | 4 900 | 350 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 7 | 33671125/503 | ամբրօքսոլ օշարակ 15մգ/5մլ 100մլ | ամբրօքսոլ (ամբրօքսոլի հիդրոքլորիդ) , Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ, | ամբրօքսոլ (ամբրօքսոլի հիդրոքլորիդ) օշարակ, 15մգ/5մլ, 100մլ ապակե 22իկ և չափիչ գդալ 5մլ | հատ | 475,0 | 11 875 | 25 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 10 | 33621390/502 | ամիոդարոն 5% 3մլ մ/մ | ամիոդարոն «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ) լուծույթ ներարկման, 50մգ/մլ, 3մլ ամպուլներ (10/2x5/), 10 ամպուլներ 3մլ (պիտակ թանղերով), 10 ամպուլներ 3մլ (դիվիդելլա) | հատ | 203,7 | 40 740 | 200 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 16 | 33651111/505 | ամօքսիցիլին օշարակ 250մգ/5մլ | Ամօքսիցիլին, Հեմոֆարմ | ամօքսիցիլին (ամօքսիցիլինի | հատ | 844,0 | 25 320 | 30 | ք. Գավառ Ազատությ | Ըստ պատվիրատո | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 100մլ | | տրիհիդրատ) գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի. 250մգ/5մլ, 40գ գրանուլներ ապակե սրվակում 100մլ դեղակախույթի համար | | | | | ան 21 | ի պահանջի | ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավելի լինել, քան փոխյալ տարվա դեկտեմբերի 25-ը: |
| 19 | 33661127/502 | Անալգին ամպ 50% 2մլ | Անալգին «Բորիսովյան բուժպատրաստուկն երի գործարան» ԲԲԸ | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում) լուծույթ ներարկման, 500մգ/մլ, 2մլ ամպուլներ | հատ | 39,3 | 294 825 | 7500 | ք. Գավառ Ազատությ ան 21 | Ըստ պատվիրատո ւի պահանջի | |
| 25 | 33661121/503 | ացետիլսալիցիլաթ թու դ/հ 0.5գ | ացետիլսալիցիլաթթ ու , Իրբիտսկի Քիմիադեղագործա-կան գործարան ԲԲԸ | ացետիլսալիցիլաթթու , դեղահատեր 500 բլիստերում | հատ | 5,7 | 1 701 | 300 | ք. Գավառ Ազատությ ան 21 | Ըստ պատվիրատո ւի պահանջի | |
| 30 | 33621710/503 | ատենոլոլ 100մգ | ատենոլոլ «Բորիսովյան բուժպատրաստուկն երի գործարան» ԲԲԸ | ատենոլոլ , դեղահատեր 100 մգ, բլիստերում (30/3x10/) | հատ | 4,6 | 1 365 | 300 | ք. Գավառ Ազատությ ան 21 | Ըստ պատվիրատո ւի պահանջի | |
| 31 | 33621710/504 | ատենոլոլ 50մգ | ատենոլոլ «Բորիսովյան բուժպատրաստուկն երի գործարան» ԲԲԸ | ատենոլոլ , դեղահատեր 50 մգ, բլիստերում (30/3x10/) | հատ | 3,8 | 1 146 | 300 | ք. Գավառ Ազատությ ան 21 | Ըստ պատվիրատո ւի պահանջի | |
| 38 | 33691176/513 | Բերոդուալ ինհալացիայի համար 200դ/չափ 20մլ | Բերոդուալ , Բերինգեր Ինգելհայմ Ֆարմա ԳմբՀ և Քո. ԿԳ | ֆենոտերոլ (ֆենոտերոլի հիդրոբրոմիդ), իպրատրոպիումի բրոմիդ (իպրատրոպիում բրոմիդի մոնոհիդրատ) , 500մկգ/մլ+261մկգ/մլ; լուծույթ ինհալացիայի համար 200մլ ապակյա տարա | հատ | 2 690,0 | 67 250 | 25 | ք. Գավառ Ազատությ ան 21 | Ըստ պատվիրատո ւի պահանջի | |
| 41 | 33621720/503 | Բիսպրոլ դ/հ 2,5մգ | Բիսպրոլ Հեմոֆարմ | բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ) դեղահատեր թաղանթապատ 2,5մգ, բլիստերում (30/3x10/) | հատ | 10,9 | 89 380 | 8200 | ք. Գավառ Ազատությ ան 21 | Ըստ պատվիրատո ւի պահանջի | |
| 42 | 33621720/504 | Բիսպրոլ դ/հ 10մգ | Բիսպրոլ Հեմոֆարմ | բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ) | հատ | 16,2 | 226 800 | 14000 | ք. Գավառ Ազատությ ան 21 | Ըստ պատվիրատո ւի պահանջի | |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | դեղահատեր թաղանթապատ 10մգ, բլիստերում (30/3x10/) | | | | | | |
| 52 | 33691176/517 | Գլիցերին մոմիկ 1գ | Գլիցերին Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ | գլիցերոլ , մոմիկներ ուղիղաղիքային 1000մգ (10/2x5/) | հատ | 122,0 | 24 400 | 200 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի |
| 60 | 33661153/502 | դեքսամեթազոն ակնակաթիլներ 0.1% 5մլ | դեքսամեթազոն , Վարշավայի դեղագործական գործարան «Պոլֆա» Ս.Ա. | ակնակաթիլներ (դեղակախույթ), 1մգ/մլ, 5մլ պլաստիկե սրվակ-կաթոցիկ | հատ | 578,3 | 5 782,6 | 10 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի |
| 64 | 33661149/501 | Դիակարբ դ/հ 250մգ | Դիակարբ , Պոլֆարմա դեղագործական գործարան Ս.Ա | ացետազոլամիդ դեղահատեր 250 մգ | հատ | 69,3 | 14 544,6 | 210 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի |
| 71 | 33631310/502 | Դիկլոն մոմիկ 12,5 մգ | Դիկլոն , Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) մոմիկներ ուղիղաղիքային 12,5 մգ. (10/2x5/) | հատ | 122,0 | 36 600 | 300 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի |
| 72 | 33631310/503 | Դիկլոն մոմիկ 25 մգ | Դիկլոն Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) մոմիկներ ուղիղաղիքային 25 մգ. 10/2x5/) | հատ | 122,0 | 2 440 | 20 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի |
| 74 | 33631310/505 | դիկլոֆենակ ամպ 25մգ/մլ 3մլ | դիկլոֆենակ , Հեմոֆարմ | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) լուծույթ ներարկման 25մգ/մլ, 3մլ ամպուլներ | հատ | 80,0 | 400 000 | 5000 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի |
| 76 | 33671130/501 | Դիմեդրոլ 1%, 1մլ ամպ | Դիմեդրոլ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ ամպուլներ | հատ | 26,2 | 262 100 | 10000 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի |
| 81 | 33611170/502 | դրոտավերին 20մգ/մլ 2մլ ամպ | դրոտավերին «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ) , լուծույթ ներարկման 40մգ/2մլ, 2մլ ամպուլներ | հատ | 44,8 | 89 540 | 2000 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի |
| 83 | 33611170/504 | Նո- շպա ֆորտե դ/հ 80մգ դ/հ | Նո- շպա ֆորտե Խինոին Դեղագործական և Քիմիական Գործարան Փրայվիտ Քո. ՍՊԸ, | դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ) դեղահատեր 80մգ, (24/1x24/) | հատ | 36,6 | 14 644 | 400 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 84 | 33631491/501 | Պարլազին կաթիլներ 10 մգ 20 մլ | Պարլազին , Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, | ցետիրիզին (ցետիրիզինի դիհիդրոքլորիդ) կաթիլներ ներքին ընդունման, 10մգ/մլ, 20մլ ապակե սրվակ կաթոցիկով | հատ | 2 160,7 | 10 803,6 | 5 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 86 | 33621700/503 | Էգիլոկ 100մգ դ/հ | Էգիլոկ , Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, | մետոպրոլոլ (մետոպրոլոլի տարտրատ) դեղահատեր, 100 մգ | հատ | 25,8 | 15 498 | 600 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 87 | 33621520/502 | Էնալապրիլ դ/հ 20մգ | Էնալապրիլ Հեմոֆարմ | Էնալապրիլ (Էնալապրիլի մալեատ) դեղահատեր, 20մգ բլիստերում (20/2x10/), | հատ | 24,0 | 768 000 | 32000 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 88 | 33621520/503 | Էնալապրիլ դ/հ 10մգ | Էնալապրիլ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | Էնալապրիլ (Էնալապրիլի մալեատ) դեղահատեր 10մգ բլիստերում (20/2x10/), | հատ | 4.9 | 2 062,2 | 420 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 90 | 33691176/518 | Էնտերոլ դ/փոշի 250մգ, փաթեթ | Էնտերոլ, Բիկոդեքս | սակխարոմիցես բուլարդի լիոֆիլացված բջիջներ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի, 250մգ, փաթեթիկներ | հատ | 182,9 | 109 734 | 600 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 93 | 33691201/501 | կատվախոտի ոգեթուրմ 30 մլ | կատվախոտի ոգեթուրմ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | կատվախոտի ոգեթուրմ , 200մգ/մլ, 30մլ ապակե սրվակ | հատ | 125,6 | 5 023,6 | 40 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 96 | 33661156/501 | թիմոլոլ ակնակաթիլներ 0.5% 5մլ | Թիմոլոլ Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ., | թիմոլոլ (թիմոլոլի մալեատ) ակնակաթիլներ, 5մգ/մլ, 5մլ պլաստիկե սրվակ կաթոցիկ | հատ | 347,0 | 3 470 | 10 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 97 | 33631290/502 | իբուֆեն օշարակ 100մգ/5մլ 100 մլ | իբուֆեն Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ | իբուպրոֆեն օշարակ, 20մգ/մլ, 100մլ պլաստիկե տարա և 5մլ չափիչ ներարկիչ | հատ | 650,0 | 65 000 | 100 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 98 | 33631290/503 | ՄԻԳ-400 դ/հ 400մգ | ՄԻԳ-400 Բեռլին-Քեմի ԱԳ, | իբուպրոֆեն դեղահատեր թաղանթապատ 400մգ (10, 20/2x10/, 30/3x10/, 50/5x10/) | հատ | 51,0 | 469 200 | 9200 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 99 | 33631290/504 | Իբուֆեն օշարակ | Իբուֆեն Մեդիկալ | իբուպրոֆեն | հատ | 650,0 | 16 250 | 25 | ք. Գավառ | Ըստ | |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 100մգ/5մլ 100մլ | Հորիզոն ՍՊԸ | դեղակախույթ ներքին ընդունման, 20մգ/մլ, 100մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ | | | | | Ազատության 21 | պատվիրատուի պահանջի | |
| 102 | 33642230/502 | Էութիրոքս դ/հ 100մկգ | Էութիրոքս Մերկ ԿԳաԱ | լևոթիրոքսին (լևոթիրոքսին նատրիում) դեղահատեր, 100մկգ բլիստերում (100/4x5/) | հատ | 9,4 | 28 200 | 3000 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 107 | 33661116/502 | Լիդոկայինի հիդրոքլորիդ ցողացիր 10% 38գ | Լիդոկային Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, | Լիդոկայինի ցողացիր, 4,6մգ/դեղաչափ, 38գ ապակե տարայում 50մլ, դեղաչափիչ մխոցով | հատ | 2 789,0 | 27 890 | 10 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 113 | 33611200/502 | լոպերամիդ դ/պ 2մգ | լոպերամիդ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | լոպերամիդ (լոպերամիդ հիդրոքլորիդ) դեղապատիճներ, 2մգ, բլիստերում (10/1x10/, 20/2x10/) | հատ | 7,1 | 7 100 | 1000 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 119 | 33671135/501 | կալցիումի քլորիդ 10 % 5,0 | կալցիումի քլորիդ Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, | կալցիումի քլորիդ լուծույթ ներարկման, 100մգ/մլ, 5մլ ամպուլներ, (10/2x5/, | հատ | 89,0 | 39 160 | 440 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 126 | 33621761/502 | կարդիոմագնիլ դ/հ 150 մգ | Կարդիոմագնիլ, Տակեդա ԳմբՀ | ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ դեղահատեր թաղանթապատ, 150մգ+30,39մգ, ապակե տարայով | հատ | 24,0 | 180 000 | 7500 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 128 | 33621690/502 | կարվեդիլոլ դ/հ 12.5մգ | Կարվեդիլոլ, Գրինդեքս ԲԸ | կարվեդիլոլ դեղահատեր, 12,5մգ, (28/2x14/) | հատ | 19,4 | 58 260 | 3000 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 131 | 33631300/505 | կետոպրոֆեն ամպ 50մգ/մլ 2մլ | կետոպրոֆեն Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ., | կետոպրոֆեն լուծույթ ներարկման, 50մգ/մլ, 2մլ ամպուլներ բլիստերում (5/1x5/, 10/2x5/) | հատ | 117,9 | 176 805 | 1500 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 132 | 33691176/521 | կետոտիֆեն դ/հ 1մգ | կետոտիֆեն «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | կետոտիֆեն (կետոտիֆենի ֆումարատ) դեղահատեր 1մգ, բլիստերում (30/3x10/) | հատ | 4,9 | 3 928 | 800 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 138 | 33691176/523 | կորվալոլ 25մլ | կորվալոլ Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ | էթիլբրոմիզովալերիանատ, ֆենոբարբիտալ, պղպեղային անանուխի յուղ կաթիլներ ներքին | հատ | 240,0 | 16 800 | 70 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդունման 20մգ/մլ+ 18,26մգ/մլ+ 1,42մգ/մլ, 25մլ ապակե շշիկ | | | | | | | |
| 140 | 33611150/502 | Կրեոն -25 000 դ/պ | Կրեոն -25 000 Աբբոտտ Լաբորատորիես ԳմբՀ | պանկրեատին (լիպազ 25000ԵՖՄ, ամիլազ 18000 ԵՖՄ, պրոտեազ 1000 ԵՖՄ) դեղապատիճներ աղելույծ, 300մգ, բլիստերում (20/2x10/), պլաստիկե տարայով | հատ | 205,0 | 246 000 | 1200 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 142 | 33621100/501 | հեպարին ինդար սրվ 5000ԱՄ/մլ 5մլ | Հեպարին, ԱՐՇ Ինդար | հեպարին (հեպարին նատրիում) լուծույթ ե/մ և ն/ե ներարկման 5000ՄՄ/մլ, 5մլ սրվակներ (5) | հատ | 1 400,0 | 2 800 000 | 2000 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |
| 144 | 33621580/502 | հիդրոքլորոթիազիդ դ/հ 25մգ | հիդրոքլորոթիազիդ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ | հիդրոքլորոթիազիդ դեղահատեր, 25մգ բլիստերում (20/2x10/), | հատ | 9,8 | 3 932 | 400 | ք. Գավառ Ազատության 21 | Ըստ պատվիրատուի պահանջի | |

***Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ, Ազատության 21, «Գավառի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-16:00:
*Մատակարարը ուժեղ ազդող դեղ մատակարարելու համար պետք է ներկայացնի լիցենզիա*
*Բժշկական թթվածին մատակարարող մասնակիցը պետք է ունենա լիցենզիա*
դեղերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրաման
*˚դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝*
*ա. 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ, բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ, գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը կամ դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետը, հանձնելու պահին դեղի մնացորդային պիտանիության ժամկետը սահմանվում է պատվիրատուի կողմից, բայց ոչ պակաս, քան 3 ամիս: Սույն կետը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարիքների համար ձեռք բերվող դեղերի համար.*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ | <<Նատալի ֆարմ>> |
| Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21 | ք. Երևան,Օզանովի 15/1 |
| «Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Գեղարքունիք մ/ճ | Հ/Հ 1570005065330100 |
| հ/հ 220085140329000 | ՀՎՀՀ 01222567 |
| ՀՎՀՀ 08417304 | Էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru |
| Տնօրեն՝ Գ. Սողոմոնյան | Հեռ. (010)744212 |
| | գլխավոր տնօրեն Ա. Աստրյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 2
« 13 » 03. 20 23 թ. կնքված
«ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/6-1»* ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 33611360/501 | Ակվադետրիմ D-3 ջրային լուծույթ 10 մլ | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 100 % |
| 6 | 33671125/502 | ամբրօքսոլ դ/հ 30մգ | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 100 % |
| 7 | 33671125/503 | ամբրօքսոլ օշարակ 15մգ/5մլ 100մլ | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 100 % |
| 10 | 33621390/502 | ամինոկապրոն 5% 3մլ մ/մ | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 100 % |
| 16 | 33651111/505 | ամօքսիցիլին օշարակ 250մգ/5մլ 100մլ | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 100 % |
| 19 | 33661127/502 | Անալգին ամպ 50% 2մլ | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 100 % |
| 25 | 33661121/503 | ացետիլսալիցիլաթթու դ/հ 0.5գ | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 100 % |
| 30 | 33621710/503 | ատենոլոլ 100մգ | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 100 % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 31 | 33621710/504 | ատենոլոլ 50մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 38 | 33691176/513 | Բերոդուալ ինհալացիայի համար 200դ/չափ 20մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 41 | 33621720/503 | Բիպրոլ դ/հ 2,5մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 42 | 33621720/504 | Բիպրոլ դ/հ 10մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 52 | 33691176/517 | Գլիցերին մոմիկ 1գ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 60 | 33661153/502 | դեքսամեթազոն ակնակաթիլներ 0.1% 5մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 64 | 33661149/501 | Դիակարբ դ/հ 250մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 71 | 33631310/502 | Դիկլոն մոմիկ 12.5 մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 72 | 33631310/503 | Դիկլոն մոմիկ 25 մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 74 | 33631310/505 | դիկլոֆենակ ամպ 25մգ/մլ, 3մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 76 | 33671130/501 | Դիմեդրոլ 1%, 1մլ ամպ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 81 | 33611170/502 | դրոտավերին 20մգ/մլ 2մլ ամպ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 83 | 33611170/504 | Նո- շպա ֆորտե դ/հ 80մգ դ/հ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 84 | 33631491/501 | Պարլազին կաթիլներ 10 մգ 20 մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 86 | 33621700/503 | Էգիլոկ 100մգ դ/հ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 87 | 33621520/502 | էնալապրիլ դ/հ 20մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 88 | 33621520/503 | էնալապրիլ դ/հ 10մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 90 | 33691176/518 | Էնտերոլ դ/փոշի 250մգ, փաթեթ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 93 | 33691201/501 | կատվախոտի ոգեթուրմ 30 մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 96 | 33661156/501 | թիմոլոլ ակնակաթիլներ 0.5% 5մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 97 | 33631290/502 | իբուֆեն օշարակ 100մգ/5մլ 100 մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 98 | 33631290/503 | ՄԻԳ-400 դ/հ 400մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 99 | 33631290/504 | Իբուֆեն օշարակ 100մգ/5մլ 100մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 102 | 33642230/502 | Էութիրոքս դ/հ 100մկգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 107 | 33661116/502 | Լիդոկայինի հիդրոքլորիդ ցողացիր 10% 38գ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 113 | 33611200/502 | լոպերամիդ դ/պ 2մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 119 | 33671135/501 | կալցիումի քլորիդ 10 % 5,0 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 126 | 33621761/502 | կարդիոմագնիլ դ/հ 150 մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 128 | 33621690/502 | կարվեդիլոլ դ/հ 12.5մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 131 | 33631300/505 | կետոպրոֆեն ամպ 50մգ/մլ 2մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |

Сканировано с CamScanner

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 132 | 33691176/521 | կետոտիֆեն դ/հ 1մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 138 | 33691176/523 | կորվալոլ 25մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 140 | 33611150/502 | Կրեոն -25 000 դ/պ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 142 | 33621100/501 | հեպարին հեղար սրվ 5000ՄՄ/մլ 5մլ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |
| 144 | 33621580/502 | հիդրոքլորոթիազիդ դ/հ 25մգ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 100 % |

**ԳՆՈՐԴ**

<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21
«Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Գեղարքունիք մ/6
հ/հ 220085140329000
ՀՎՀՀ 08417304
Տնօրեն ' Գ. Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Նատալի ֆարմ>>
ք. Երևան,Օգանովի 15/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Էլ. հասցեն՝ natalipharm@bk.ru
Հեռ. (010)744212
գլխավոր տնօրեն Ա. Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Сканировано с CamScanner